

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՄԱՌ


(Մենդյան 100-ամյակի առթիվ)

Պատմ. գիտ. դոկտոր Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Նիկողայոս Մառը սովորական գիտնական չէր: Նա մեծ էր իբրև հետազոտող և քաղաքացի էր բառի բուն իմաստով: Նա ապրում էր հասարակական կյանքում և մտածողության մեջ կասարկող մեծ հեղաշրջումների դարաշրջանում և այն խառնվածքը շուներ, որպեսզի կարողանար այդ ամենը գիտել սառնասրտորեն. բնդհակառակը, գիտության նոր ու լայն հորիզոններ որոնող նրա միտքը զրականապես էր արձագանքում այդ հեղաշրջումներին և նրանց նմանող խիզախումների էր ձգտում՝ իր բնորած գիտական բնադավաններում:

Նիկողայոս Մառը մի գիտնական էր, որի միտքը խիստ անհանդիստ էր ու մշտապես որոնող: Հաճախ նա ինքն քննադատում, զարգացնում, իսկ երբևմն էլ մերժում էր իր իսկ երևելի կարգացած դասախոսությունը կամ արտահայտած միտքը: Պատմում են, որ Մառի բնկերակից գիտնականներից մեկը մի անգամ ասում է նրան՝ «նիկոլայ Յակովլևիչ, ես զարմանում եմ, թե ինչպես 'Իուր հաճախ փոխում եք Ձեր կարծիքը», որին Մառը պատասխանում է՝ «Իսկ ես ապշած եմ մնում, թե ինչպես եք Դուք կարողանում քառասուն տարի շարունակ միևնույն բանը կրկնել»: Եթե սա ճշմարտության մոտիկ գրույց է լուր, ապա ն. Մառի իսկ ձևորով են գրված հետևյալ խոսքերը՝ «Եթե ես բաժանեի մի անգամ սահմանված և ինչ-որ ժամանակ կատարելապես ձշգրիտ գիտական նվաճումների անխախտելիության տեսակետը, ապա դու սպանիչ հարված կլինեիր իմ ամբողջ գիտական անցյալին»¹:

1888 թ. ավարտելով Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ֆակուլտետը, Մառը գիտության մեջ մտավ իբրև արևելագետ, մասնավորապես՝ իբրև կովկասագետ, սակայն նա չափափակվեց գիտության մի նեղ ճյուղում: Նա նույնքան հնազետ էր, պատմաբան, որքան լեզվաբան և բանասեր:



¹ Н. Я. Марр, Яфетический Кавказ и третий этнический элемент средиземноморской культуры. («Избранные работы», т. I, Ленинград, 1933, էջ 83):

Աշակերտելով Քերովբե Պատկանյանին և Ցազարելուն, որոնք Պետերբուրգի համալսարանի կովկասագիտության սյուններն էին, Մառը վճռականապես գերազանցեց իր ուսուցիչներին և հենվելով կովկասում ու Արևմտյան Իվրոպայում զարգացող հայագիտության ու վրացագիտության նվաճումների վրա, կովկասագիտությունը Ռուսաստանում մի նոր աստիճանի բարձրացրեց:

Նա սկսեց վրաց լեզվի ու բանասիրության քննությամբ և շուտով անցավ նաև հայ բանասիրության հարցերին, հատուկ ուշադրություն նվիրելով վրաց և հայ միջնադարյան գրականության պակաս ուսումնասիրված կողմերին և ընդհանրություններին. դիտելով դրանք Մերձավոր Արևելքի մշակութային միջավայրի ընդհանուր ֆոնի վրա: 1890 թ. առաջին անգամ այցելելով Հայաստան ն. Մառը կյանված ուսումնասիրում է հայկական ձեռագրերը՝ պարզելու հայ գրականության պատմության և բանասիրության՝ իրեն հետաքրքրող մի շարք հարցեր: Նրա ուշադրությունը մեծապես գրավեցին նաև Հայաստանի հնագիտական հուշարձանները, և պատահական չէ, որ մի տարի անց՝ 1892 թ., նա պիտի ձեռնարկեր այդ հուշարձաններից մեկի պեղումները: Նա ծավալեց իր հետազոտությունները հայ և վրաց բանասիրության անդաստանում՝ հրապարակ բերելով բազմաթիվ հոդվածներ, ուսումնասիրություններ, որոնց շարքում առանձին տեղ են գրավում Վարդան Այգեկցու առակների ժողովածուների քննական բնագրերի կազմումն ու ուսումնասիրությունը, Պիոտր Իբրացու վարքագրության բնագրի հրատարակությունը, արևելքում տարածված ռովասափի և Բարեղամի վեպի հայկական, վրացական բնագրերի և դրանց հետ կապված հարցերի ուսումնասիրությունը և այլ գործեր:

Հայագիտությունը մինչ այդ գերազանցապես բանասիրական բնույթ էր կրում, իսկ ն. Մառը վերին աստիճանի բազմակողմանի էր համարում նրա առջև ծառայած հարցերը և լայն՝ նրա ընդգրկման շրջանակները: Նման մոտեցմամբ էլ նա 1899 թ. ձևակերպեց հայագիտության խնդիրները՝ Վարդան Այգեկցու առակները իբրև մագիստրոսական դիսերտացիա սլաշտպանելու առթիվ իր արտասանած ներածական ճառում: Նա գտնում էր, որ հայագիտությունը ինքնուրույն արևելագիտական գիտություն է, որն ունի իր սեփական խնդիրները, ուստի սխալ կլիներ նրան սոսկ օժանդակ կամ երկրորդական նշանակություն վերագրել: Միաժամանակ ն. Մառը պնդում էր, թե «Հայագիտությունը չի կարող հիմնվել միայն բանասիրության վրա՝ բառիս նեղ իմաստով», որ հնագիտությունը, ազգագրությունը, բանահյուսությունը բոլորովին էլ պակաս չպետք է հետաքրքրեին հայադետին, քան լեզվաբանությունը և գրականությունը²: Կոչ անելով բազմակողմանիորեն և հիմնավորապես ուսումնասիրել հայ ժողովրդի դարավոր պատմությունը և մշակույթը, ն. Մառը ասում էր. «Արհեստական անջրպետը հարազատ մշակութային անցյալի հետ, հսկայական մեծամասնությանը կտանի դեպի հոգևոր այլասերում: Չարթնացնելով գիտական հետաքրքրություն դեպի այն բանը, ինչ մոտ է մարդկանց սրտին, մենք դրանով իսկ բթացնում ենք ինքնագործունեության ազնվագույն ձգտումը, արմատապես խախտում անկեղծ, գիտակից համակրանքի հնա-

² Н. Я. Марр. К вопросу о задачах арменоведения («Избранные работы», т. I, էջ 18)։

րավորությունը ղեկի մեր լայնածավալ հայրենիքի [առջև ծառայած] հսկայական պատմական խնդիրները...»³:

Իր իսկ մշակած սկզբունքներից ելնելով, Ն. Մառը արձագանքել է կովկասագիտության շատ ու շատ կարևոր հարցերին: Նրան խորապես հետաքրքրել են կովկասյան ժողովուրդների լեզվի, պատմության, գրականության, աղբյուրագիտության, արվեստի, հնագիտության, էպիգրաֆիկայի, ազգագրության և բանահյուսության բազմաթիվ հարցերը: Նրա ուսումնասիրության առարկան հանդիսացան Կովկասի մի շարք ժողովուրդների լեզուները, որոնք նա դասում էր «հարեթական» լեզուների շարքը: Ուսումնասիրելով այդ լեզուները՝ նա գիտական շրջանառության մեջ էր մտցնում նրանց բառապաշարը և զարգացման յուրովի բնույթը՝ օրինաչափությունները: Նա կազմել է գրաբարի, վրացերենի, ճաներենի (լազերենի), օսերենի բերականության և այլ ձևերի, որոնք գիտական և գործնական մեծ արժեք են ներկայացնում:

Ն. Մառը իրեն կովկասագետ իր ուսումնասիրության առարկայի նկատմամբ երևան էր բերում լայն պատմա-բնական մոտեցում, ուստի նա հանդես եկավ ավանդական հայագիտության և վրացագիտության քննադատությամբ, որքանով դրանք տառացի էին հետևում հայ և վրաց աղբյուրների ավանդաբար հազորդվող տեղեկություններին՝ առանց խորամտի լինելու երկրամասի սոցիալ-տնտեսական զարգացման և պատմական միջավայրի քննության մեջ: Այդուհանդերձ նա չբաժանեց Գարազայանի, Գ. Խալաբյանցի և այլոց գեր-քննադատական մոտեցումը աղբյուրների նկատմամբ: Մառը խնդիր էր դնում այդ աղբյուրները բնել ոչ միայն գուտ բանասիրական տեսակետից, այլև գիտել իրեն պատմական որոշ դարաշրջանի և միջավայրի հասարակական, տնտեսական և մտավոր կյանքի արտահայտություններ՝ իրեն պատմական հուշարձաններ ամենայայն առումով:

Մառը հանդես եկավ նաև եվրոպական կովկասագիտության սահմանափակվածության քննադատությամբ, որքանով այն կամ հետևում էր տեղական ավանդական տեսակետներին կամ, անտեսելով հայերի ու վրացիների պատմական և մշակութային զարգացման ուղու միասնությունը՝ անջատում էր դրանք իրարից և հակադրում իրար, որոնելով հայ լեզվի և մշակույթի մեջ միայն հնդեվրոպական տարրերը:

Մառը հայերին ու վրացիներին իրարից շանջատելու բարի ցանկության մեջ ավելի հևու դնաց, և փորձեց իրար մերձեցնել տարբեր լեզվական բնույթների պատկանող հայոց և վրաց լեզուները: Վրացերենը ճանաչելով իրեն առավել բնորոշ հարեթական լեզու, նա հայերենն էլ համարում էր հարեթական և արիո-եվրոպական երկու շնորհից կազմված լեզու, որն իր հարեթական շերտով մերձենում է վրացերենին:

Ն. Մառը Կովկասը գիտում էր որպես մի միասնական կուլտուր-պատմական միջավայր, որտեղ դարերի ընթացքում գոյացել են Կովկասի ժողովուրդների պատմական բախտի և նրանց կերտած մշակույթների բնահանրությունները, ուստի նա կովկասյան ժողովուրդների համարաշխության ու բարեկամության ջերմ պաշտպան էր և անողոր խարազանում էր այն գործիչներին և գիտնականներին, որոնք վնաս էին հասցնում այդ համերաշխությանը:

³ Նույն տեղում:

Առաջ քաշելով Կովկասի պատմական միասնության գաղափարը, Ն. Մառը միաժամանակ Կովկասի անցյալը շէր գիտում իբրև սոցիալական ներհակություններից զուրկ մի ամբողջություն, ընդհակառակը, նա առաջինն էր, որը հիմնավորապես խախտեց հայ կղերա-ֆեոդալական և բուրժուական պատմագիտության այն ավանդական տեսակետը, որով սքողվում էին սոցիալական ներհակություններն ու բախումները միջնադարյան հայկական հասարակության մեջ, դրանք փոխարինելով «հայկական անհամերաշխությամբ և անմիաբանությամբ»: Նա առաջինն էր, որը մերժեց պավլիկյան, ապա թոնդրակյան շարժումները լոկ կրոնական աղանդ համարելու տեսակետը և բացահայտեց այդ շարժումների ժողովրդական և սոցիալական բովանդակությունը: Նա նկատեց, որ հայ Բագրատունիների թագավորությունը XI դարի առաջին կեսում ապրում էր խոր սոցիալական ճգնաժամ: «Առաջացել էր սոցիալական մեծ շարիք»⁴, — ասում էր նա:

Ն. Մառը իրավացիորեն պնդում էր, որ այդ շարիքի պատճառը հասարակության մեջ առաջացած սոցիալական ներհակություններն էին: Ստեղծվել էր մի դրություն, ասում էր նա, երբ երկրի աշխատավոր բնակչությունը զրկվել էր իր իսկ արտադրածը վայելելու հնարավորությունից, իսկ նրանք, ովքեր վայելում էին դառը քրտինքով ստեղծված այդ նյութական բարիքները, նույնիսկ չէին կամենում հիշել նրանց արտադրողներին, ընդհակառակը, կեղեքում, ոտնահարում էին նրանց, — ընդգծել է Ն. Մառը⁵:

Նիկողայոս Մառի ծառայությունները հայագիտության անդաստանում չափազանց մեծ են եղել, իսկ դրանց մեջ աչքի ընկնող տեղ են զբաղում նրա պատարած հնագիտական հետազոտություններն ու պեղումները Հայաստանի տարբեր վայրերում: Արագածի լանջերին նա 1893 թ. հետազոտել է հին ամրոցները և պեղել դամբարաններ: Դերեղի ձորում պեղել է Ակներ գյուղի (Որնակ) դամբարանադաշտը:

1899 թ. նա հետախուզական բնույթի պեղումներ կատարեց Դվինի միջնաբերդում, պարզելու՝ Վերին Արտաշատ գյուղի մոտ գտնվող ավերակները պատկանում են Արտաշատի՝ ն, թե Դվին քաղաքին:

1909—1911 թթ. Ն. Մառը Յա. Ի. Սմիրնովի և ճարտարապետ Կ. Կ. Ռոմանովի աշխատակցությամբ պեղեց Գառնիի հույակապ հեթանոսական տաճարը: Նույն տարիներին նա Գեղամա լեռներում հայտնաբերեց ժողովրդի կողմից վիշապ կոչվող հսկա քարե կոթողները, որոնք կապված են ջրի և արգասավորության պաշտամունքի հետ: 1913 թ. Ն. Մառը պեղեց Շիրակավանի բրոնզեդարյան դամբարանները: 1916 թ. նրան հաջողվում է կազմակերպել արշավախումբ դեպի Վան, որտեղ նա պեղումներ է կատարում Թոփրակ Կալե ուրարտական քաղաքում, իսկ Հ. Օրբելին՝ Վանի ուրարտական միջնաբերդում: Հայտնաբերվեցին զգալի քանակությամբ հնագիտական նյութեր, իսկ Հ. Օրբելու պեղումները պսակվեցին ուրարտական սեպագրության խոշորագույն հուշարձաններից մեկի՝ Սարղուրի II թագավորի տարեգրության հայտնաբերմամբ: Այդ տարեգրությունը ուսումնասիրեց և հրատարակեց Ն. Մառը:

⁴ Н. Я. Марр, Ани, Ереван, 1939, էջ 33:

⁵ Նույն տեղում, էջ 54—55:

Ականավոր գիտնականի հնադիտական ուսումնասիրությունների և ընդհանրապես մինչհեղափոխական Հայաստանի հնադիտական պեղումների պրասակր, սակայն, կադմում են Անիի պեղումները, որ նա ձեռնարկեց ղեկն 1892—1893 թթ., ապա ընդհատումից հետո վերսկսելով 1904 թ., շարունակեց մինչև 1916 թ. Պատահականությամբ ն. Մատի ծննդյան 100-ամյակը զուգահեյտում է Անին պարսպով շրջափակելու 1000-ամյակին և արժև այդ նշանավոր քաղաքի պեղումներին անդրադառնալ փոքր-ինչ հանգամանորեն:

Անիում ն. Մատը պեղեց և ուսումնասիրեց քաղաքի միջնաբերդը իր պարիսպներով, Բաղրատունիների հսկա պալատի, բաղնիքի, եկեղեցիների ավերակները, որոնց մնացորդներն իսկ պերճախոսությամբ վկայում են արքունիքի շքեղության և փարթամության մասին: Խոշոր նշանակություն ունեցան սբ. Գրիգոր եկեղեցու պեղումները, որ Գաղիկ I արքան կառուցել էր տվել այդ ժամանակ արդեն կործանված Զվարթնոց տաճարի օրինակով: Պարզվեց, որ հանձարեղ Տրդատ ճարտարապետը, որը միաժամանակ ղուլխ բերեց Անիի հուշակավոր կաթողիկեի շինարարությունը, Գաղիկի տաճարը զարդարել էր արքայի մեծադիր արձանով՝ տաճարի մոզելը ձեռքին բռնած: Այդ գյուտով հաստատվեց Զվարթնոցի՝ ոմանց անհավատալի թվացող վերակազմությունը, որը տվել էր Թորոս Թորամանյանը: Մատը Անիում պեղեց Առաքելոց հնգադմբեկ եկեղեցին իր զավիթներով, բազմաթիվ այլ եկեղեցիներ, քաղաքացիական շենքեր՝ սպալատներ, բնակելի շենքեր իրենց կոմպլեքսներով:

Ն. Մատը ուսումնասիրեց Անիի բնակության համար հարմարեցված մեծ թիվ կազմող բարձրները, պեղեց քաղաքի սղբատ թաղամասերը և ցայտուն կերպով բացահայտեց սպալատների ու հյուղակների միջև եղած հակադրությունները՝ միջնադարյան այդ փարթամ քաղաքում:

Քաղաքի տնտեսական կյանքի և առևտրի ուսումնասիրության համար բացառիկ նշանակություն ունեցան Անիի նշանավոր շենքերից մեկի՝ սֆինքսների, առյուծների և վիշապների քանդակներով զարդարված շքամուտքերով հյուրանոցի, ինչպես և իջևանի կամ առևտրական տան պեղումները: Պեղվեց նաև Անիի գլխավոր փողոցը՝ «Բուն փողոցը», որի վրա բացվեցին բնակելի շենքերի կոմպլեքսներ, կուլպակներ, որոնք արհեստանոց-խանութներ էին, բանի որ արտադրողը նաև վաճառում էր իր արտադրածը, ուստի արհեստավորական շարքերը սովորաբար նաև առևտրական շարքեր էին: Բուն փողոցի վրա բացվեցին Անիի ջրմուղի մի զիծը, նրա բարեկարգությունը ստուգելու և մաքրելու հարմարանքներով և ջրմուղի վրա կանգնեցված աղբյուրի մնացորդները՝ Փրկչի եկեղեցու մոտ: Պարզվեց, որ ջուրը կավե փողրակներով բերված է Առիճո լեռան աղբյուրներից՝ 12 կիլոմետր երկարությամբ զծով, որը ճյուղավորվել է քաղաքում:

Ն. Մատը, Օրբելին, Թորամանյանը ուսումնասիրեցին Անիի ճարտարապետական հուշարձանները, իրենց շքեղ քանդակներով և որմնանկարներով, հավաքեցին և հրատարակության պատրաստեցին Անիի և շրջակայքի հարյուրավոր արձանագրությունները, որոնք բացառիկ արժև ունեն միջնադարյան Հայաստանի պատմության, մանավանդ սոցիալ-տնտեսական կյանքի, մշակույթի և լեզվի ուսումնասիրության համար:

Պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին ոչ միայն նշանավոր ճարտարապետական շենքեր, նրանց մանրամասները, սրվիստի մեծարժև հուշարձան-

ներ, այլև հսկայական քանակությամբ հնագիտական առարկաներ՝ մետաղի գործիքներ, զենքեր, զարդեր, կավե անոթներ՝ հասարակ և ջնարակած, դրանց թվում բարձրորակ հախճապակի, բազմազան ապակեղեն, քարից, փայտից, ոսկորից պատրաստված մեծ թվով առարկաներ: Դրանց մեծագույն մասը արտադրվել է այդ խոշոր քաղաքում և անեցիների զարգացած ճաշակին համապատասխան գեղարվեստական ձևավորում ստացել: Բայց և զգալի են դրսից ներմուծված իրերն ու առարկաները, որոնք մեծ թվով գտնված դրամների հետ միասին երևան են բերում Անիի և Հայաստանի տնտեսական ու մշակութային կապերը հարևան, նույնիսկ հեռավոր երկրների հետ:

Ն. Մառը Անիում հիմնադրեց երկու թանգարան, մեկը հնագիտական նյութերի. մյուսը ճարտարապետական մանրամասների և քանդակագարդ քարերի համար: Նա Անին դարձրել էր մի ամբողջ ինստիտուտ, որտեղ պատրաստվում էին հայագիտական կադրեր, մասնավորապես հնագետներ, կատարվում էին ընդարձակ ուսումնասիրություններ, որոնց Ն. Մառը մասնակից դարձրեց բացի բազմաթիվ երիտասարդներից նաև ռուսական գիտության ականավոր գործիչների՝ արևելագետներ Վ. Վ. Բարտոլդին և Ֆա. Ի. Սմիրնովին, բյուզանդագետ Վ. Ն. Բենիլևիչին, դասական պատմության և հնագիտության մասնագետ Մ. Ի. Ռոստովցևին, հայագետ Ն. Ադոնցին և ուրիշների:

Մառը շատ բարձր էր գնահատում Անիի նշանակությունը: Նա գրել է՝ «Անին գեղարվեստական հուշարձանների հարստությամբ միանգամայն բացառիկ. հրաշալի ճարտարապետության կենդանի թանգարան է: Քաղաքը, թեև հայկական, հսկայական նշանակություն ունի նաև վրացական, ընդհանրապես ողջ կովկասյան և՛ քրիստոնեական, և՛ մուսուլմանական արվեստի համար...»⁶:

Մի այլ տեղում Մառը գրել է. «Անին գիտության համար թանկ է ոչ միայն հայկական արվեստի ստեղծագործություններով, այլև իր բոլոր էպիգրաֆիկ և առարկայական հուշարձաններով, որոնք շոշափելի կերպով (осязательно) անդրադարձնում են նրա բնակիչների հոգևոր և նյութական կյանքը»⁷: Մառը նշում է, որ Անիի պեղումները առատ նյութեր են տվել ոչ միայն Հայաստանի պատմության, ինչպես և Հայաստանի ու հարևան երկրների մշակութային փոխադարձ կապերի, այլև Վրաստանի, Բյուզանդիայի, Իրանի կամ մոնղոլների պատմության տարբեր հարցերի լուսարանության համար:

Անիի պեղումները պատկանում էին մինչհեղափոխական Ռուսաստանում կատարվող առավել ծավալուն հնագիտական աշխատանքների թվին, իսկ նրանց արդյունքները անգերազանցելի եղան:

Եվ որպիսի դժվարություններ պիտի հաղթահարեր այդ անսպառ եռանդի տեր մարդը՝ գլուխ բերելու Անիի պեղումների մեծ և փառավոր գործը: Հաճախ նա ինքն էլ գեկուցումներ և դասախոսություններ կարդալով միջոցներ էր հայթայթում պեղումներ կատարելու համար:

Անիի պեղումներն էին, որ մղում տվեցին Մառին ուսումնասիրելու միջնադարյան Հայաստանի և հարևան երկրների ներքին սոցիալական կյանքը

⁶ Н. Я. Марр. Батум, Ардаган, Карс. Петроград 1922, էջ 23:

⁷ Н. Я. Марр. Ани столица Армении («Братская помощь пострадавшим армянам», Москва, 1898, էջ 189):

Նրանց արդյունքների հիման վրա էր, որ Ն. Մառը 1910-ական թթ. առաջ բաշկնց այն թեզը, թե ազգերի և նրանց մշակույթների միջև սահմանափակ գիծը անցնում է ոչ թե նրանց լեզուների, կրոնների կամ դավանանքների, այլ սոցիալական հակասությունների միջով: Հետևաբար ներհակություններ և անդունդ պետք է տեսնել միևնույն ժողովրդի տարբեր դասերի և նրանց մշակույթների միջև: Մինչդեռ տարբեր ժողովուրդների միևնույն դասերը (իմա՝ դասակարգերը) իրար մոտիկ են ոչ միայն շահերով, այլև մշակույթով:

Կովկասի մշակութային զարգացման միասնության Ն. Մառի բմբունումը պենդանի զաղափար էր: Անիում, Կովկասում, թե Պետերբուրգում, ապա Լեհինդրադում նա, իր շուրջը համախմբած կովկասցի ուսանողներին և գիտնականներին, ամեն բան անում էր, որպեսզի հայագիտությունը և վրացագիտությունը զարգանան համատեղ և համընթաց: Ն. Մառը ծավալեց կովկասագիտական լայն գործունեություն Պետերբուրգի համալսարանում: Անիում նա հղացավ Կովկասի պատմա-հնագիտական ինստիտուտի ստեղծման միտքը և այն կազմակերպեց Քրիստիանով: Նա հիմնադրեց Անիի գիտական գրադարանությունը և հայ-վրացական բնագրերի մատենաշարերը, ինքն էլ հեղինակելով քաղմաթիվ արժեքավոր հրատարակություններ և ուսումնասիրություններ:

Հայոց և վրաց հոգևոր և նյութական մշակույթի հուշարձանները այնքան շատ էին, բազմաբովանդակ, հարուստ իրենց արվեստով և ձևերով, որ նրանց մեծավաստակ ուսումնասիրողը հարց բարձրացրեց, որպեսզի հայագիտությունը և վրացագիտությունը հրապարակով ճանաչվեն իրեն արևելագիտության ինքնուրույն բնագավառներ: Մառը մերժեց եվրոպական գիտնականների այն տեսակետը, որով Կովկասի երկրների մշակույթը գիտվում էր որպես մեծ տերությունների «հեռավոր հորիզոնի վրա» հայտնված երևույթ:

Ինքը Մառն էլ կովկասագիտական իր զբաղմունքով պատվավոր տեղ գրավեց XIX դարի վերջերի և XX դարի առաջին տասնամյակների ուսական արևելագետների փայլուն համաստեղության մեջ, իբրև նրա վառ աստղերից մեկը:

Մարդկային հասարակության պատմությունը և մշակութային ստեղծագործությունը համամարդկային համընդհանուր մի պրոցես է, — պնդում էր մեծանուն գիտնականը: Անցել է այն ժամանակները, երբ «սպիտակ ոսկորը ջոկում էին սև ոսկորից»: «Համաշխարհային քաղաքակրթության կառուցքը պետք է բարձրացնել բոլոր դարաշրջանների և, առանց բացառության, բոլոր ժողովուրդների նյութական և հոգևոր կարգի փաստերի վրա, որոնք վաղուց պահանջում են վերադնահատել արիական կամ ոչ-արիական ժողովուրդների, եվրոպական կամ ոչ եվրոպական երկրների, թվով և տարածության չափով մեծ կամ փոքր ազգությունների և պետությունների համամարդկային մշակույթի ստեղծման մեջ ունեցած մասնակցության իրական չափերը»⁸:

Միանգամայն բնական է, որ առաջավոր գիտնական Ն. Մառը ողջունեց Հոկտեմբերյան սոցիալիստական ռեվոլյուցիան և անվերապահորեն ու մեծ

⁸ Н. Я. Марр, Кавказский культурный мир и Армения («Журнал министерства народного просвещения», июль, 1915). առանձնատիպ, էջ 4:

և ռանդոմ լծվեց սովետական հասարակության դիտական և օրգանական շինարարության մեծ գործին:

Կովկասագետ, արևելագետ Ն. Մառը մինչհեղափոխական Ռուսաստանի ականավոր արևելագետներից մեկն էր: Բայց նա ամենից առաջ լեզվաբան էր: Ուսումնասիրելով կովկասյան մի շարք լեզուներ և պարզելով, որ դրանք, տարբերվելով հնդեվրոպական, սեմական և այլ լեզվական ընտանիքներից, ինչ-որ ինքնուրույն խումբ են կազմում, նա այդ լեզուներին «հարեթական» սլավոնական անունը տվեց: Ապա հարեթական սիստեմի լեզուների մեջ նա դասեց Ասիայի, Եվրոպայի և Աֆրիկայի մի շարք կենդանի և մեռած լեզուներ, իսկ 1920 թ. սկսեց հարեթականությանը տալ «ընդհանուր տեսական» կերպարանը:

Ն. Մառի անցած ուղին սկստի ունենալով, սովորաբար նրա գործունեությունը բաժանում են երկու շրջանի: Առաջին շրջանում նա հանդես է գալիս իրրև հայագետ, կովկասագետ, արևելագետ և տարբեր հարցերի զարմանքի արժանի լայն ընդգրկումով, բայց և կոնկրետ ուսումնասիրություններով մեծ ավանդ է մուծում գիտության մեջ: Երկրորդ շրջանը սկսվում է 1920-ական թթ. և տևում է մինչև նրա կյանքի վերջը (1934 թ.): Այս շրջանում Ն. Մառը տարվում է լեզվաբանության ընդհանուր տեսական հարցերով և փորձում է հիմնովին հեղաշրջել հին լեզվաբանությունը: Մինչև 1920 թ. վերջերը Ն. Մառը ձևակերպեց այսպես կոչված «հարեթական տեսությունը», լեզվի մասին նոր ուսմունքի հավակնությամբ: Սակայն սխալ կլիներ պնդել, թե Ն. Մառի ուսումնասիրությունները այս երկրորդ շրջանում բացառապես նվիրված էին այսպես կոչված լեզվի մասին նոր ուսմունքի տեսական հարցերին: Ն. Մառի աշխատությունների ցանկում 1920—1934 թթ. ևս կարելի է գտնել մի քանի տասնյակ հոդվածներ և ուսումնասիրություններ, որոնք Ն. Մառի նախորդ շրջանի գիտական գործունեության շարունակությունը և օրգանական մասն են կազմում:

Հարեթական տեսությունը, կամ լեզվի մասին նոր ուսմունքը, ինչպես այն կոչեցին Ն. Մառը և նրա հետևորդները, առաջ էր քաշում և հավակնում էր լուծել լեզվի առաջացման և զարգացման հետ կապված բազմաթիվ արմատական հարցեր, տրամագծորեն հակադրվելով հնդեվրոպական լեզվաբանությանը և մերժելով նրա սկզբունքային բոլոր դրույթները:

Հնդեվրոպական լեզվաբանության տարբերակած լեզվական ընտանիքները Մառը անվանեց սիստեմներ, որոնք բոլոր նրա ոչ այլ ինչ էին, քան լեզվաստեղծման միասնական պրոցեսի զարգացման տարբեր փուլերի (ստադիաների) արտահայտությունների և լեզվի մեջ կատարված մի քանի արմատական կերպարանափոխությունների արգասիք: Կերպարանափոխություններ, որոնք տեղի էին ունենում ոչ թե էվոլյուցիոն, այլ ռեոլյուցիոն ճանապարհով: Ըստ որում լեզվի նոր ուսմունքը պիտի որոշեր այդ փուլերի առաջացման հաջորդականությունը և ժամանակը, բայց այնպես էլ չորոշեց: Հարեթական լեզուները համարվում էին բազմափուլ (պոլիստադիալ), ուստի նրանց բացառիկ դեր էր վերագրվում՝ առհասարակ բոլոր լեզուների զարգացման պատմությունը ուսումնասիրելու համար: Լեզվի այսպիսի զարգացման տեսությունը թույլ էր տալիս ազգակցություն և տարբերություններ որոնել բոլոր լեզուների միջև, անկախ նրանց իրական ազգակցություններից և տարբերություններից:

Ստադիալ տեսությունը անտեսում էր ցեղերի և նրանց լեզուների ազդակցությունը նաև էթնոգենեզի խիստ կարևոր հարցում և թույլ էր տալիս ժողովուրդների կազմավորմանը տալ միջավայրի հաշվառմամբ պատմական թվացող, սակայն ազդակցության անտեսմամբ բոտ էություն սխալ լուսարանություն: Ըստ այդմ ուսմանը նախորդները, օրինակ, կարող էին լինել սկյութացիները, իսկ հայ ժողովուրդը ունեցել է երկկորիզ կազմավորում՝ արիո-եվրոպական և հարեթական ցեղերի միամորմամբ:

Ն. Մառը համապարփակ դեր էր վերադրում ոչ միայն ստադիալ զարգացմանը, այլև գենետիկ սեմանտիկային, մասամբ նաև խոսքի պալեոնտոլոգիային: Նա բնության և հասարակական կյանքի որոշ երևույթների հետ իմաստով կապված հասկացություններ արտահայտող բառերի խմբեր կամ փնջեր (սեմանտիկ փնջեր) էր գտնում և դրանցով բացատրում էր բնության և կյանքի, մանավանդ առասպելաբանության մի շարք հարցեր:

Հարեթական սեմանտիկական պակասավոր կողմեր, մանավանդ սխալ նպատակադրում ունի, բայց այն մեր կարծիքով զուրկ չէ նաև ուսանելի և հեռանկար բաց անող կողմերից, ուստի արդարացի չէր Ստալինը, որը քննադատելով լեզվի նոր ուսմանը, միանգամայն ժխտական վերաբերմունք ցուցաբերեց նաև սեմանտիկայի նկատմամբ:

Նույնը կարելի է ասել նաև խոսքի պալեոնտոլոգիայի մասին: Պալեոնտոլոգիական մեթոդի էությունը լեզվական երևույթների առաջացման հաշտողականության և ժամանակի որոշումն է: Լեզուն անցել է պատմական զարգացման երկար ուղի, ուստի բնական է, որ լեզվական երևույթները շերտ առ շերտ առաջացել են տարբեր ժամանակներում:

Մառը գտնում էր, որ այդ շերտերը և նրանց գոյացման ժամանակը կարելի է պարզել խոսքի պալեոնտոլոգիայի օգնությամբ: Ըստ որում այդ անելիս Մառը լայնորեն օգտագործում էր տարբեր ժողովուրդների հոգևոր, մանավանդ նյութական մշակույթի տվյալները: Մեր կարծիքով խոսքի պալեոնտոլոգիան կարող է քննադատաբար օգտագործվել և այն նախուց կերպով դնել նետելու հարկը չկա:

Ուշադրության արժանի է նաև Մառի հարցադրումը լեզվի և մտածողության միասնության վերաբերյալ: Լեզուն մտածողության արտահայտությունն է, մարդկանց փոխադարձ հաղորդակցության միջոց, բոտ նրա՝ կինետիկ, առաջ հնչյունային խոսքի ձևով: Բնությունը և հասարակությունը ապրում են զարգացման և փոփոխությունների հարատև մի պրոցես, իսկ մարդը իր նյութական և հոգևոր կյանքի վերարտադրության հար բարդացող պրոցեսում ճանաչում և բացահայտում է բնության ու հասարակության դեռևս չճանաչված և նոր առաջացող երևույթները: Դրան համընթաց զարգանում և հարստանում են մարդու մտածողությունը և լեզուն:

Մառը երկար տարիներ զլխավորում էր ոչ միայն լեզվի, այլև հնագիտության բնագավառը: Բնական է, որ նա լեզվի նոր ուսման մի շարք դրույթները պիտի տարածեր նաև գիտության այս անդաստանի վրա:

Արևմտյան գիտնականները մշակութային աչքի բնկնող երևույթներ և բնահանրություններ երևան բերելով, ամեն ճիգ ու ջանք գործադրում էին որոշելու դրանց կենտրոնը և գծելու նրա սահմանը: Համանման երևույթներ

րի հայտնաբերումը կամ առաջացումը այլ, հաճախ շատ հեռավոր վայրերում նրանք շտապում էին բացատրել արդեն նախօրոք որոշված կենտրոնից տեղի ունեցած գաղթի (միգրացիայի) միջոցով: Այս եղանակով կարելի էր բացատրել ոչ միայն մարդաբանական, էթնիկական կամ ժողովուրդների կազմավորման, լեզվական, այլև հոգևոր և նյութական մշակույթի ամեն մի համանման կամ նոր առաջացած երևույթ, առանց լուրջ կերպով խորամուխ լինելու այդ երևույթների առաջացման բուն պատճառների և պատճառական կապակցությունների ու զարգացման ներքին օրինաչափությունների մեջ: Այդ էր պատճառը, որ արևմտյան գիտնականների մեծամասնությունը միգրացիաներին վերագրեց շատ համապարփակ և բացառիկ դեր:

Ն. Մառը միանգամայն տեղին նկատեց միգրացիոն տեսության խոշոր արատները և կատարելապես ժխտական դիրք բռնեց նրա նկատմամբ, մերժելով միգրացիաները անգամ այն դեպքում, երբ նրանք իրական պատմական եղելություններ են հանդիսացել, ուստի իրոք օգնում են բացատրելու շատ բան:

Ի հակադրություն միգրացիոն տեսության, Ն. Մառը առաջ քաշեց ցեղերի, ժողովուրդների ավտոխթոնության (տեղաբնակ լինելու) և նրանց կերտած մշակույթի՝ տեղում ստեղծված լինելու թեզը:

Ն. Մառն էլ իր հերթին ստադիալ զարգացման տեսությունը և ստադիալ ընդհանրություններին վերագրեց համապարփակ և շատ բան նույնպիսի դյուրությունները բացատրող դեր, ինչպես այդ անում էին արևմտյան գիտնականները միգրացիոն տեսության նկատմամբ:

Պարզ է, որ մարքսիստ գիտնականները շեն կարող շահմանագատվել համապարփակ բնույթի միգրացիոն տեսությունից, որի դեմ պայքարը պետք է շարունակվի, սակայն առանց միգրացիայի իրական եղելությունների դերի անտեսման: Անընդունելի է նաև Մառի ստադիալ զարգացման տեսությունը: Այլ հարց է, որ ցեղերն ու ժողովուրդները, նրանց լեզուն և մշակույթը մեկ տեղում և մեկընդմիջ տրված չեն, նրանք առաջացել են պատմականորեն, ժամանակի և տարածության մեջ, ունեցել են իրենց զարգացման դարաշրջաններն ու փուլերը, ունեցել իրենց ներքին պատճառակցական կապերը և օրինաչափությունները, որոնց գիտական հայտնագործությունն ու ճիշտ լուսաբանությունը պահանջում են ոչ թե ամեն ինչ դյուրություններ բացատրող մակերեսային տեսական կառուցումներ, այլ խորագնդին և տքնաջան աշխատանք և դրա վրա հիմնված մտավոր խիզախում ու թոփախ:

Ամփոփենք. նիկողայոս Մառը շատ խոշոր, բայց և հակասական մտածող գիտնական էր: Նախահեղափոխական Ռուսաստանի այդ առաջավոր գիտնականը քայլեց հեղափոխական մեծ հեղաշրջումների հետ և փորձեց հեղաշրջել լեզվաբանությունը, անգամ հնագիտությունը՝ մարքսիստական աշխարհայացքի լույսի տակ, սակայն այդ բանը նրան հիմնականում չհաջողվեց:

Մառը գիտելիքների հսկայական պաշարով զինված, մեծ տաղանդով և դարմանայի աշխատասիրությամբ օժտված այդ ականավոր գիտնականը ստեղծագործեց 46 տարի և թողեց հինգ հարյուրից ավելի գիտական աշխատություն, որոնց մեջ կան իսկական գիտական փայլով շողացող շատ գոհարներ, հսկայական փաստական նյութ, իսկ հաճախ սխալների և մոլորություն-

Ներքի կողքին՝ ուշագրավ և արժեքավոր մեկնարանություններ, որոնք բոլորը միասին կազմում են գիտական մի նշանավոր ժառանգություն, որի կողքով անցնել չի կարելի:

НИКОЛАИ ЯКОВЛЕВИЧ МАРР

(К 100-летию со дня рождения)

Доктор историч. наук Б. Н. АРАКЕЛЯН

(Р е з ю м е)

В статье показывается, что Николай Яковлевич Марр был незаурядным ученым, одним из наиболее ярких звезд в созвездии русских востоковедов конца XIX и первой трети XX вв. Развернув весьма обширную научную деятельность в области грузиноведения и арменоведения, Н. Я. Марр поднял на новую ступень русское кавказоведение.

Подчеркнув единство путей развития кавказских народов и рассмотрев Кавказ как единый культурный мир, Н. Я. Марр одновременно был поборником солидарности и дружбы между кавказскими народами.

Н. Я. Марр был высокоэрудированным и многогранным ученым — не только лингвистом и филологом, — но и в равной мере историком, археологом и историком культуры. Он неоднократно указывал на необходимость многостороннего комплексного изучения памятников материальной и духовной культуры, явившихся результатом творчества данного народа, проживавшего в определенной культурно-исторической и социальной среде, не в отрыве, а в тесном контакте с соседними народами.

Н. Я. Марр вел большую археологическую работу в Армении, но венцом и наиболее светлой страницей его археологических исследований являются многолетние раскопки (1892—1893, 1904—1916) в знаменитой столице армянских Багратидов городище Ани.

Н. Я. Марр приветствовал Октябрьскую социалистическую революцию и усердно включился в научно-культурное строительство Советской страны. В 20-х годах он увлекся общетеоретическими вопросами лингвистики и сформулировал основные положения так называемой яфетологии, как антитезы старой индоевропейской лингвистики и с претензией нового марксистского учения о языке. В этом втором периоде своей научной деятельности Н. Я. Марр также создал несколько десятков научных работ, посвященных конкретным вопросам кавказоведения, востоковедения и лингвистики, которые являются продолжением и органической частью его прежних работ.

Н. Я. Марр был весьма крупным, но и подчас противоречиво мыслящим ученым. Передовой ученый дореволюционной России Н. Я. Марр шагал вместе с великими революционными преобразованиями и пытался совершить переворот в вопросах лингвистики, но в этой части предприятия его были неудачны.

Н. Я. Марр, этот выдающийся ученый, обладающий огромным запасом знаний, большим талантом и удивительным трудолюбием, неустанно творил в течение 46 лет и оставил более 500 научных исследований, среди которых имеется немало жемчужин с подлинным блеском, огромный фактический материал, порой наряду с заблуждениями и ошибками, ценные и заслуживающие внимания толкования. Все это в совокупности составляет значительное научное наследие.